

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՎՃԻՌ

Ի նկատի ունենալով տ. Թորգոմ վարդապետ Մուշեղյանի 19 հունիս 1979 թվակիր հրաժարական նամակը, որով նա հայտնում է իր ցանկությունը՝ ընդմիշտ հեռանալու կրոնական կյանքից և Հայաստանյայց եկեղեցու ծառայությունից,

Ի նկատի ունենալով Գերագույն հոգևոր խորհրդի 30 հունիս 1979-ի նիստի որոշումը, ընթացք տալու տ. Թորգոմ վարդապետի դիմումին և խնդրելու Հայոց Հայրապետին՝ նրան կարգալույծ անելու,

Ի նկատի ունենալով նաև տ. Թորգոմ վարդապետի՝ հայ եկեղեցու կանոնները ոտնակոխելու, ծածուկ ու ապօրինի կերպով քաղաքացիական կարգով ամուսնացած լինելու պարագան, որի մասին միայն վերջերս հայտնի է դարձել Մայր Աթոռին,

Ի նկատի ունենալով, որ նա նույնպես ծածուկ կերպով դիմում է ներկայացրել պատկան իշխանություններին՝ ընտանյոք արտագաղթելու մայր հայրենիքից և մեկնելու Ամերիկա,—

Մենք այսու Մեր հայրապետական վճիռով կարգալույծ ենք հռչակում տ. Թորգոմ վարդապետին՝ հեռացնելով նրան Մայր Աթոռիս միաբանության և Հայաստանյայց եկեղեցու հոգևորականաց շարքերից և դասում նրան աշխարհականաց կարգը, իր նախկին՝ Արտաշես Մուշեղյան ավազանի անունով:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
2 հուլիս 1979 թ.